# ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԱՂՎԱ ՀԱՄԱՐ

## ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

*Վերջին 1,5 ամսում քաղաքական բարդ, լարված իրադրության հրամայական պահանջով կուսակցության Ստեփանակերտի քաղաքային կոմիտեում իրար ետևից մի քանի խորհրդակցություններ, ակտիվի ժողովներ են կայացել։ Հերթական՝ հուլիսի 13-ի խորհրդակցությանը մասնակցում էին քաղաքի հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարները, սկզբնական կուսկազմակերպությունների քարտուղարները։*

*Օրակարգում մի հարց էր՝ ինչպես վերականգնել նորմալ աշխատանքային ռիթմը, կայունացնել իրադրությունը, հարց, որը փետրվարից սկսած բազմիցս դարձել է քննարկման առարկա։ Նշվեց, որ չնայած ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ սովետի հուլիսի 12-ի նստաշրջանի մասնակիցները դիմել էին աշխատավորներին աշխատանքի դուրս գալու կոչով, մարզում, քաղաքում շարունակվում է գործադուլը։*

*—Մարզսովետի նստաշրջանի որոշումը,— ասաց կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար Զ. Մովսիսյանը,— ժողովրդի միաձույլ կամքի արտահայտությունն է, դժվար 5 ամիսների պայքարի արդյունքը։ Որոշ ինստանցիաներում, հավանաբար, կգտնեն, որ այն ինչ-որ տեղ հակասում է ՍՍՀՄ սահմանադրությանը, սակայն պիտի տեսնեն և գլխավորը՝ նրա հիմքում նույն սահմանադրության հիմնարար սկզբունքն է՝ ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը։ Ներկայումս մի գերագույն խնդիր ունեն Լեռնային Ղարաբաղի, Ստեփանակերտի աշխատավորները՝ ամրապնդել-հաստատել ընդունված որոշումը ակտիվ աշխատանքով։ Այդ առումով շատ կարևոր է կուսակցական-տնտեսական ակտիվի, բոլոր կոմունիստների դիրքորոշումը։ Չի կարելի թույլ տալ ոմն կազիխանովների, որոնց հնարավորություն է տրվում հանդես գալ կենտրոնական մամուլում, բացահայտ խեղաթյուրելով իրականությունը՝ ձևավորել երկրի հասարակական կարծիքը, երբ քաղաքում իրադարձություններին տոն տվողը մի խումբ «չսափրված երիտասարդներ են», որոնք իրենց ձեռքն են առել ժողովրդական շարժումը... Ճիշտն այն է, որ եղել են առանձին սայթաքումներ, շեղումներ սկզբնական շրջանում, բայց որ կուսակցությունն ու ժողովուրդը, իշխանությունն ու ժողովուրդը միասնական են իրենց նպատակի մեջ՝ անուրանալի է, դա մի անգամ չէ, որ հաստատվել է կուսակցական-սովետական կարևորագույն փաստաթղթերում։ Այսօր, քան երբևէ, հարկ է ապավինել բանականությանը, ցուցաբերել քաղաքացիական հասունություն, վերականգնել ու պահպանել աշխատանքային ռիթմը, հասարակական կարգուկանոնը։ Գործադուլը պայքարի ծայրահեղ և անընդունելի միջոց է։*

*Ղարաբաղյան իրադարձությունները համարելով երկրում քաղաքական նոր մտածողության ստեղծման, հասարակական հոգեբանության վերակառուցման կուսակցության կուրսի անմիջական արդյունք, ԼՂԻՄ ագրոարդի նախագահ, կուսակցության մարզկոմի բյուրոյի անդամ Վ. Գրիգորյանը ելույթում նշեց, որ իր բախտը սեփական ձեռքերով կռելու ժողովրդի աննախադեպ այս շարժումը, հավանաբար, առաջիկայում ևս կհանդիպի լուրջ խոչընդոտների, հարկավոր է գիտակցել դա, հավաքել համբերություն և աշխատել, քանի որ միայն աշխատանքով է հնարավոր հաղթահարել դրանք։*

*Այնուհետև Զ. Մովսիսյանն ու Վ. Գրիգորյանը պատասխանեցին խորհրդակցության մասնակիցների մարզի, քաղաքի խաթարված կենսագործունեության ամենատարբեր կողմերի հետ առնչվող բազմաթիվ հարցերի։ Նոր գործարանի դիրեկտոր Ս. Աբրահամյանը մասնավորապես տագնապ հայտնեց, թե հազիվ ձեռնարկության կոլեկտիվը դուրս գա աշխատանքի, եթե կանոնավոր չգործեն տրանսպորտը, մանկապարտեզները։*

*Կուլտուրայի աշխատողների արհմիության մարզային կոմիտեի նախագահ Լ. Ղարայանը հարցրեց, թե ինչու իշխանությունները խիստ միջոցներ չեն ձեռնարկում Հայաստանից ադրբեջանցիների Լեռնային Ղարաբաղ՝ հատկապես Շուշի և Մարտունի ներհոսքը կասեցնելու ուղղությամբ։ Հարցի պատասխանը ակնհայտորեն չբավարարեց դահլիճին։ Գործնական քայլեր չեն արվում, մինչդեռ այդ երևույթը խիստ ազդում է մասսաների տրամադրության վրա, առաջ բերում անցանկալի խմորումներ, ընդհանուր դժգոհություն։*

*Դուրս կգա՞ն, արդյոք, ստեփանակերտցիները վաղը, մյուս օրը աշխատանքի՝ խորհրդակցությունում այդ մասին կոնկրետ, հաստատ խոսք չեղավ։ Մի բան ակնհայտ էր, մարդիկ շարունակում են մնալ սպասողական վիճակում։ Ղարաբաղցիները ակնկալում են, որ ՍՍՀՄ Գերագույն սովետը ըմբռնումով կվերաբերվի ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ սովետի որոշմանը։ Այն ժամանակ աշխատել-չաշխատելու խնդիրը կլուծվի ինքնիրեն։*

Լ. ՑԱՐՍՅԱՆ